01/10.16866-09
2009-10-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյանի, Լիլիթ Գալստյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Փաստաբանի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը, որպես հանցագործություն դիտելու գաղափարն ընդունելի է՝ հաշվի առնելով նշված արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը։

Սակայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նշված հանցակազմը պետք է նախատեսել ոչ թե «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» գլխում, այլ բացառապես «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածը լրացնելով նոր՝ 2.1-ին մասով, կամ լրացում կատարելով նույն հոդվածի 2-րդ մասում, կամ էլ՝ գլուխը լրացնելով նոր հոդվածով)։ Առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ փաստաբանի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելն

ուղղված է ոչ այնքան մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, որքան արդարադատության դեմ: Դա պայմանավորված է նրանով, որ միջամտելով փաստաբանի մասնագիտական գործունեությանը կարող է խոչընդոտվել գործի բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ քննությունը: Չնայած փաստաբանն ինքնին գործի քննություն չի իրականացնում, սակայն իր գործողություններով (միջնորդություններ հարուցելը, բացարկներ հայտնելը, առարկություններ ներկայացնելը, կարծիքներ հայտնելը, բողոքարկելը և այլն) նպաստում է դրա բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը: Բացի դրանից, այն կարող է հանդիսանալ մրցակցության սկզբունքի ապահովման լրացուցիչ երաշխիք, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով արդեն իսկ քրեորեն պատժելի է համարվում գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը:

Հարկ ենք համարում նշել, որ փաստաբանի օրինական գործունեությանը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև մի շարք ԱՊՀ երկրներում: Օրինակ, Ուկրաինայի քրեական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում իրավաբանական օգնություն ցուցաբերելիս պաշտպանի կամ ներկայացուցչի օրինական գործունեությանը ցանկացած ձևով խոչընդոտելու, կամ նրանց գործունեության համար օրենքով նախատեսված երաշխիքները և փաստաբանական գաղտնիքը խախտելու համար: Նշված հոդվածի 2-րդ մասը որպես ծանրացնող հանգամանք է դիտում նույն արարքը պաշտոնատար անձի կողմից, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, կատարելու համար: Նշված դրույթների հիման վրա քրեորեն պատժելի են համարվում, օրինակ, փաստաթղթերի կամ դրանց պատճենների հանձնումը մերժելը, փաստաբանական հարցումներին չպատասխանելը, փաստաբանի՝ գործի նյութերին ծանոթանալը խոչընդոտելը:

Պաշտպանություն իրականացնող անձանց գործունեությանը միջամտելու պատժելիության դրույթն ամրագրված է նաև Մոլդովայի Հանրապետության սահմանադրության 26-րդ հոդվածով։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի և հեղինակներին առաջարկում է փաստաբանի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը դիտել որպես քրեորեն պատժելի արարք՝ այն նախատեսելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում։

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-703-15.09.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (18 ապրիլի 2003թ.) հոդված 164-ի վերնագրում եւ 1-ին մասում «լրագրողի» բառից հետո ավելացնել «կամ փաստաբանի» բառերը։

***Հոդված** 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, դատարանի գործունեությանը ցանկացած ձեւով միջամտելու, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձեւով միջամտելու, մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը ցանկացած ձեւով միջամտելու եւ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսել է պատիժներ, մինչդեռ փաստաբանի գործունեությանը միջամտելու համար որեւէ պատիժ նախատեսված չէ։ Օրենսդրական պայմաններ չեն ստեղծվել «Փաստաբանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված նորմի կիրառման համար, ըստ որի՝ արգելվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների եւ հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեությանը։ Օրենսդրական այս նորմի համար չկա սահմանված պատասխանատվություն, որով փաստաբանը պաշտպանված զգա իրեն։ Մյուս կողմից, «Փաստաբանության մասին» օրենքի 19 հոդվածում սահմանվում է, որ փաստաբանը պարտավորվում է չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի։ Այս համատեքստում փաստաբանը իրավունք ունի տեղեկություններ տարածելուց հրաժարվել, իսկ համապատասխան իրավասու մարմինները իրավունք չունեն այն հարկադրել փաստաբանին։